գնացին օրս, այլ այգուցս Կիրակի (3 Յունուար) որ Պենտէկոստ ասի, ելին և գնացին ճանիբ նաւ մեծ և փոքր։

Եչի օրս (7 Յունուար) տօվա արարին, որպէս թէ աղօթք առ Աստուած վասն պատերազմին։ Եւ օրս եկին Երուսաղէմացիք և ուխտաւորքն ևս։ Եւ չարժ եղև առաւօտուս, և յետ կէս աւուրս մթացեալ եղև օրս զի եկն ամպ և տեղեաց կարկուտս մեծամեծ և ի տեղիս տեղիս ձեռաց չափով անկեալ և ի վերայ պատկերս որպէս ի վերայ քարի կոփեալ, և գլորքն փոքր ինչ քան զձուս, մինչ կշռեցաք զԺ. տրամն։ Եւ եկաց ժամ մի կամ այլ պակաս և էանց, և թէ ոչ էր անցեալ փութով՝ կարծեմ թէ բաղում աւերս առնէր, զի և ծառս բաղումս կոտորեաց, զճիւղսն և զծաղիկս պտղոցն և զպտուղս վայթեաց, բայց աղօթիւք արժանաւորաց հաճոյացելոց առ Տէր փութով էանց։ Եւ յետ այսմ բանի և եղև չարժ ևս կրկին։ Եւ յետ այսմ բանիցս՝ Տէրտէրն եկ ի գիւղէն յոր գնացեալն էր, ոչ տեսեալ զայս ի ռահս ճանապարհացն ի վերայ ծովուն, այլ անձրև փոքր ինչ։

Կիրակի Ժ-իս ի յԱստուածածին գնացի մօտ ի Մահտեսի Մարկոսն Երուսաղէմացոյ։

Դշի օրս (13 Յունուար) լու եղև աստ թէ Ցառանկն յաղթեալ Տաճկացն, գնաւսն այրելով և զայլս ընկղմելով ի ջուրս և սակաւք պրծեալ ի պատերազմէն ի Պօղազն եկին։

Կիրակիս ԺԷ-իս ընդ Մղտեսի Տիլէկի և ընդ Պակէ ի յՕրթաքեօյն գնացաք յուխտ և ի սէյիր։ Եւ երեկոյիս Տէվլէթի Իպրահիմի հարսանիքն էր, անդ գնացաք։

Այգուցս (18 Յունուար) մեր Իգնատիոս վարդապետն եկն և Ղաթըրճիօղլին եկն։

Եւ Ուրբաթիս (22 Յունուար) մեր Մղտեսին եկն ի գիւղէն։

Կիրակի ԻԴ-ի ժողովք արարաք Աստուածատուր